

Վ.Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ֆիզիկա, անգլերեն լեզու
Ուսուցիչներ՝ Ա.Եդյան, Վ.Միրզոյան

ՔԱՐԱՀՈՒՆՁԻՑ ՄԻՆՉԵՎ
ՍԹՈՈՒՆՀԵՆՁ ԵՎ
ԲՅՈՒՐԱԿԱՆ



* * *

1992 թվական: Մի հայ երիտասարդ, խռոված ողջ աշխարհից, փորձում էր գտնել, վերհիշել իսկությունը, որը մոռացվել էր իր ազգի կոմից: Նա գնաց հեռավոր Տիբեթ՝ հուսալով գտնել իր հոգևոր ուսուցչին: Նա շրջում էր երկար ժամանակ, քաղցած, ուժասպառ ու վիրավոր: Երկար փնտրելուց հետո նա տեսավ մի լամայի, որը խորասուզված աղոթքի մեջ, փակել էր իր աչքերը: Նրա շուրջը ձյունն ու սառույցը հալել էին շնորհիվ իր հզոր էներգիայի:

Լաման բացեց աչքերը ու ժպիտով ասաց. «Ի՞նչ ես կորցրել այս երկրում, այ դու, Արևի խենթ որդի»:

Հետո նա բուժեց հայի վերքերը, և օրեր անց, բաժանվելիս, ասաց նրան.

- Իսկության աղբյուրը, որը դու փնտրում ես այստեղ երկար ժամանակ, գտնվում է քո գեղեցիկ երկրում, որը կոչվում է Հայաստան՝ որը քաղաքակրթության օրրանն է: Դուք առաջին արիացիներն եք: Դուք մոռացել եք այդ մասին, բայց ձեր թշնամիները հիշում են: Ես քեզ ոչինչ չեմ կարող սովորեցնել, գիտելիքը քո մեջ է: Վերադարձիր քո երկիր և դու կգտնես իսկությունը ձեր չքնաղ սարերում:

ՔԱՐՄԱՀՈՒՆՁ

“Per Aspera ad Astra”

“Դժվարությունների միջոցով դեպի աստղերը”





Հայաստանի Միսիան քաղաքի մոտակայքում, Երևանից 200 կմ հեռավորության վրա կա նախապատմական մի հսկա հուշարձան, որը բաղկացած է հարյուրավոր կանգնած մեծ քարերից: Այդ քարերից շատերը իրենց վերին մասում ունեն կլոր անցքեր:



Հնագիտական պեղումները կատարվել են միայն հուշարձանի մոտակայքում (շուրջը), որտեղ հայտնաբերվել են հնագույն դամբարաններ ու բնակավայր, որոնք թվարկվել են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներով: Բայց ինքը քարե հուշարձանը չի ուսումնասիրվել: Այդ քարերի բովանդակության մասին միայն ենթադրություններ են արվել, որոնք կապված են եղել նրանց սուկ կրոնական, հոգևոր, կամ այլ նշանակության հետ: Միսիանի բնակիչները հուշարձանն անվանում են “Կանգնած քարեր” ու պատմում են, որ դրանք, ըստ ամենայնի, կառուցվել են կրոնական նպատակներով, և ինչպես անցյալում մարդիկ այդ անցքերի միջից աստղեր են դիտել: Հուշարձանի հնարավոր աստղագիտական դերի մասին առաջին ենթադրությունը (այլ ենթադրությունների հետ մեկտեղ) տպագրված է հնագետ Օ.Խնկիկյանի կողմից 1984 թ.

Առաջին հետազոտությունը

Ըստ ակադեմիկոս Պարիս Հերունու Քարահունջ հուշարձանը եղել է հնագույն հզոր աստղադիտարան:

Կազմվել է նրա մանրամասն տոպոգրաֆիկ քարտեզը, չափվել է նրա աշխարհագրական լայնությունն ու երկայնությունը, տեղի մագնիսական շեղման անկյունը, ինչպես և կատարվել են հորիզոնին գտնվող լեռնաշղթաների անկյունային բարձրությունների չափումները: Մանրամասն չափվել են քարերում եղած բոլոր անցքերի ուղղվածության անկյունները և այլ կարևոր բնութագրեր: Կազմվել է 223 քարերի լիակատար կատալոգը նրանց չափերի ու վիճակի նկարագրությամբ, և բոլոր այդ քարերը համարակալվել են: Կատարվել են երկնային աղբյուրների բազմաթիվ դիտումներ, Արևի և Լուսնի ծագելու, մայր մտնելու և կուլմինացիայի պահերի ֆոտոներ, նկատահանվել են վիդեոֆիլմեր:

Հետազոտողների մի այլ խումբ, օգտագործելով զգայուն մագնիսամետրեր, հայտնաբերեց, որ Քարահունջի կենտրոնական շրջանի ներսում բնական մագնիսական ուժազդերը պարույրի տեսք ունեն:

Ըստ Պարիս Հերունու Քարահունջի հուշարձանը ունեցել է երեք հիմնական ֆունկցիա.

- ❖ հին Հայաստանի գլխավոր Աստված Ար-ի (Արև) և նրա «քարտուղար» գիտության, գրի և արվեստի հովանավոր Տիր աստծո **տաճար**,
- ❖ մեծ և զարգացած **աստղադիտարան**,
- ❖ **համալսարան**:


Քարահունջի աստղադիտարանը եղել է շատ զարգացած և ակտիվ գործել է ավելի քան 7500 տարի առաջ (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ): Նա անընդհատ գործել է ավելի քան 5500 տարիների ընթացքում (մինչև մ.թ. 1-ին հազարամյակի սկիզբը): Այնպես որ Քարահունջը աշխարհի ամենահին աստղադիտարանն է:

Ակնառու է նաև, որ Քարահունջը էլ ավելի խորը ու հիմնովին ուսումնասիրման կարիք ունի, հատկապես հնագետների, աստղագետների և տարբեր այլ մասնագետների կողմից երկար տարիների ընթացքում:



Հուշարձանի տեղը և անվանումը

Քարահունջի տեղի լայնությունը $39^{\circ} 34'$ է, իսկ երկայնությունը $46^{\circ} 01'$: Նա գտնվում է ծովի մակերևույթից 1770 մ բարձրություն ունեցող սարահարթում և զբաղեցնում է մոտ 7 հեկտար տարածք Որոտան գետի Դար վտակի ձորի ձախափին: Այնտեղ հուշարձանից 5 կմ և Շաքի գյուղից 4 կմ հեռավորության վրա ստորգետնյա մի գետ է բխում ու 30 մ բարձրությունից թափվում է ցած (Շաքիի ջրվեժը), դառնալով Որոտան գետի վտակը:



Քարահունջ հուշարձանից 29 կմ դեպի արևելք (ուղիղ գծով) գտնվում է Քարահունջ անունով գյուղը, **Գորիս նոր քաղաքի մոտ: Դեպի հյուսիս-արևելք 80-90 կմ հեռավորության վրա** Լեռնային Ղարաբաղում կան ևս երկու գյուղ, որոնք կրում են Քարահունջ անունը: Դրանցից մեկի մոտ ժայռերի մեջ հնուց անցքեր են բացված (դեռ չհետազոտված):

Քարահունջի քարերը

Քարահունջ հուշարձանը բաղկացած է հետևյալ մասերից. կենտրոնական շրջան, հյուսիսային թև, հարավային թև, հյուսիս-արևելյան քարուղի, լարագիծ (որը հատում է շրջանը) և առանձին կանգնած քարեր: Քարերի բարձրությունը (գետնից) տատանվում է 0.5-ից մինչև 3 մ, իսկ կշիռը մինչև 10 տոննա: Քարերը բազալտից են, ժամանակի ընթացքում էրոզիայի են ենթարկվել և ծածկված են մամուռով: Անցքերի ներքին մակերեսը շատ ավելի լավ է պահպանվել: Կան նաև շատ կոտրատված ու չհամարակալված քարեր:



Քարերը հատվել, բերվել են մոտակա Դար գետի ձորի քարհանքից, բարձրացվել ու տեղափոխվել են հյուսված պարաններով լծկան կենդանիների (եզներ, ձիեր) միջոցով: Հետագայում, արդեն աստղադիտարանում, բացվել են քարերի անցքերը և պատրաստվել են աստղագիտական գործիքները:

Ողջ Հայաստանում (ներառյալ պատմական Հայաստանը) կան շատ հնագույն կառույցներ, քարե աստղադիտարաններ, հին համալսարաններ և այլն: Հատկապես Քարահունջ հուշարձանի շրջանում կան հնագույն շատ դամբարաններ ու համալսարաններ, ինչպիսիք են վաղ միջնադարի հռչակավոր Տաթևի, Գլաձորի, Շուշիի համալսարանները և քրիստոնեական վանքերը: «Հայաստանը Երկրի գիրքն է, որով բան են սովորել առաջին մարդիկ», - գրել է Օսիպ Մանդելշտամը:

Հայ պատմաբան Ստեփանոս Օրբելյանը (մ.թ. 13-14-րդ դար) իր «Սյունիքի պատմություն» գրքում (մ.թ. 1-12-րդ դար) հիշատակում է Քարունջ գյուղը, որը գտնվել է Սյունիք կամ Սիսական (այժմ Սիսիան) քաղաքի մոտ: Այդ անվանումը հայերեն նշանակում է «Քարե գանձ» կամ «Հիմնաքարեր»: «Հունջ»-ը հայերեն նույն «հունջ»-ն է՝ ձայն, կոչ, արձագանք, հնչյուն:

Ելնելով վերը հիշատակված տվյալներից, հուշարձանը անվանել են «Քարահունջ», այսինքն «Հնչող քարեր» կամ «Խոսող քարեր»: Իրոք, այդ քարերը հին ժամանակների աստղագետներին շատ հետաքրքիր և կարևոր տեղեկություններ են հայտնել Տիեզերքի մասին, ինչպես հիմա էլ մեզ են տալիս բազում նոր ու անսպասելի տեղեկություններ հնագույն ժամանակների մասին:



Ուրիշ հին աստղադիտարաններ Հայաստանում

Այժմ Հայաստանի Հանրապետությունը փոքր երկիր է հարավ Կովկասյան լեռներում Մեծ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում: Այնուամենայնիվ, այդ փոքր Հայաստանի ժայռերին բազմաթիվ ժայռապատկերներ կան և հին աստղադիտարաններ՝ Սևանա լճի մոտ, Վարդենիսի սարերում, Մեծամորում (Արարատյան դաշտում), Սյունիքում, Ագարակում (Արագածի ստորոտին) և այլուր:



Մթոռուհեւոց

Stonehenge



Ըստ Պարիս Չերոկոուս մ.թ.ա. 1-ին հազարամյակում և ավելի վաղ Միացյալ Թագավորության տարածքում ապրել են կելտերը-հայերը: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Հայկը Հայաստանից եկել է Բրիտանիա: Նրա հետ էին հայ հին գիտնականներ, քուրմեր: Շատ հնարավոր է, որ նրանց թվում եղել են հայտնի տոհմի պատկանող Ալբիոնիդներ:

Ըստ եռթյան հենց նրանց անունից է ծագել Անգլիայի հնագույն Ալբիոն անունը:

Հետաքրքիր տեղեկություն կա Քարահունջ և Սթոունհենջ բառերի միջև: “Սթոուն” անգլերեն նշանակում է ”քար”, իսկ “հենջ” բառ չկա: Սակայն որոշ հեղինակներ բացատրում են ”հենջ” որպես “հանգ” (կախադան):

Հնագույն անգլիական եռալեզու “Անգլո-սաքսոնական ժամանակագրություն” գրքում գրված է. ”Այս հողերի առաջին բնակիչները եղել են բրետոնացիները՝ որոնք եկել են Հայաստանից...”



Avalon Home	Document Collections	Ancient 4000bce - 399	Medieval 400 - 1399	15th Century 1400 - 1499	16th Century 1500 - 1599	17th Century 1600 - 1699	18th Century 1700 - 1799	19th Century 1800 - 1899	20th Century 1900 - 1999	21st Century 2000 -
-----------------------------	--------------------------------------	---	---	---	---	---	---	---	---	--

The Anglo-Saxon Chronicle : First Century

[Previous](#)[Contents](#)[Next](#)

The island Britain (1) is 800 miles long, and 200 miles broad. And there are in the island five nations; English, Welsh (or British) (2), Scottish, Pictish, and Latin. The first inhabitants were the Britons, who came from Armenia (3), and first peopled Britain southward. Then happened it, that the Picts came south from Scythia, with long ships, not many; and, landing first in the northern part of Ireland, they told the Scots that they must dwell there. But they would not give them leave; for the Scots told them that they could not all dwell there together; "But," said the Scots, "we can nevertheless give you advice. We know another island here to the east. There you may dwell, if you will; and whosoever withstandeth you, we will assist you, that you may gain it." Then went the Picts and entered this land northward. Southward the Britons possessed it, as we before said. And the Picts obtained wives of the Scots, on condition that they chose their kings always on the female side (4); which they have continued to do, so long since. And it happened, in the run of years, that some party of Scots went from Ireland into Britain, and acquired some portion of this land. Their leader was called Reoda (5), from whom they are named Dalreodi (or Dalreathians).

Sixty winters ere that Christ was born, Caius Julius, emperor of the Romans, with eighty ships sought Britain. There he was first beaten in a dreadful fight, and lost a great part of his army. Then he let his army abide with the Scots (6), and went south into Gaul. There he gathered six hundred ships, with which he went back into Britain. When they first rushed together, Caesar's tribune, whose name was Labienus (7), was slain. Then took the Welsh sharp piles, and drove them with great clubs into the water, at a certain ford of the river called Thames. When the Romans found that, they would not go over the ford. Then fled the Britons to the fastnesses of the woods; and Caesar, having after much fighting gained many of the chief towns, went back into Gaul (8).

Յետաքրքիր վարկածներ և փաստեր Սթոունհենջի ստեղծման մասին

Սլիսբրիի Փլեյնոլմ հայտնաբերված Սթոունհենջը նախապատմական ճարտարապետական հուշարձան է, որը մինչ օրս շարունակում է միստիկա մնալ անգամ ժամանակակից հնէաբանների և հետազոտողների համար: Այն, ինչ առաջին հայացքից կարող է պարզապես մի քարակույտ թվալ, իրականում մեծ գաղտնիք և հարուստ տեղեկություններ է պարունակում մեր անցյալի մասին: Յնէաբանները պնդում են, որ Սթոունհենջը կառուցվել է մ.թ.ա. 3000-1800 թվականներին, Քարահունջից շատ ավելի ուշ: Քանի որ սա մարդակերտ կառույց է, փորձագետները փակուղում են հայտնվել, թե ինչպես էր հնարավոր այն կառուցել՝ հաշվի առնելով այդ ժամանակ օգտագործվող տեխնոլոգիաների ու աշխատանքի գործիքների ցածր մակարդակը:

Սթոունհենջի մասին հայտնի առաջին հիշատակումն արվել է 1155 թվականին: Չամաձայն լեգենդի՝ մի հսկա օգնել է կախարդ Մեռլինին այն կառուցել:

Չամաձայն այդ լեգենդի՝ Մեռլինի հրամանով մի հսկա Սթոունհենջի հսկայական քարերը քարշ էր տալիս Իռլանդիայի սարերից մինչև շինարարության վայր:

Մեռլինի մասին այլ լեգենդներում ասվում է, որ Մեռլինը կառուցեց Սթոունհենջը որպես անգլիական արքաների ու արքայադուստրերի հուղարկավորության վայր: Չսկա քարերն այստեղ կանգնած են անհիշելի ժամանակներից: Քարերից ամեն մեկը մոտ 4 մետր բարձրություն ունի և կշռում է մոտ 25 տոննա, իսկ որոշները՝ 50 տոննա: Չաշվարկել են, որ այդ քարերը հեռվից բերելու համար պահանջվել է 1000 մարդ և 7 տարի:



Կարծիք կա, որ այստեղ հնագույն աստղադիտարան է եղել՝ մի վայր, որտեղից մարդիկ կապ են հաստատել Տիեզերքի հետ: Աստղագետ-գիտնականները կարծում են, որ Սթոունհենջը եղել է լուսնային և արեգակնային օրացույց, որ այն Արեգակնային համակարգի մակետն է երկրի վրա: Եվ այդ ժամանակ շատ լավ տիրաապետել են աստղագիտությանը, մաթեմատիկային, աշխարհագրությանը և ճարտարապետությանը:



Փաստեր Stonehenge-ի մասին



Որոշ հնագետներ կարծում են, որ Սթոունհենջը եղել է դիակիզարան և նրանք այն անվանել են ժամանակի Մեծ Բրիտանիայի ամենամեծ հայտնի գերեզմանատունը:

Սթոունհենջի մասին մնացած հանելուկների թվում է, թե ինչպես են նրա շինարարները, ովքեր ունեցել են միայն պարզունակ գործիքներ, կարողացել տեղափոխել բոլոր հսկա քարերը տեղանք:

Կապույտ քարերը, որոնք կշռում են 2 տոննայից մինչև 5 տոննա, տեղափոխվել են Սթոունհենջ ավելի քան 150 մղոն հեռավորությունից: Հնագետների մեծ մասը կարծում է, որ մարդիկ կապույտ քարերը տեղափոխել են ջրի և ցամաքի վրայով դեպի Սթոունհենջ, թեև նաև ենթադրվում է, որ այս քարերը կարող էին հրել դեպի վայր՝ սառցադաշտերով: 2000 թվականին Մենթեր Պրեսլի անունով ուելսյան խումբը փորձեց օգտագործել միայն քարե դարի գործիքներ և կատարել կապույտ քարերի ճանապարհորդությունը դեպի Սթոունհենջ:



Այդ նախագիծը ներառում էր ցամաքի վրայով կապուկտ քարը մեծ փայտե սահնակով քարշ տալը, այնուհետև այն նավով տեղափոխում ջրի վրայով:

Այնուամենայնիվ, տարբեր խնդիրներ առաջացան ճանապարհին, ներառյալ սահնակը գողանալը (այն շուտով հայտնաբերվեց, բայց դրա համար կռուներ էր անհրաժեշտ քարը դրա վրա վերադարձնելու համար): Ավելի ուշ, քարը ընկել է ջուրը և խորտակվել:

Ի վերջո, ամբողջ նախագիծը դադարեցվեց:



* * *

Այժմ այս հնագույն հուշարձանը պատկանում է բրիտանական թագին, բայց դա միշտ չէ, որ այդպես է եղել: 1915 թվականին Սթոունհենջը պատկանում էր միլիոնատեր Սեսիլ Չաբին: Նա մասնակցել է աճուրդին: Միլիոնատերը գնել է հողատարածքը, որի վրա գտնվում է Սթոունհենջը, որպես նվեր կնոջը, սակայն նա չի գնահատել լայն ժեստը: Երեք տարի անց Չաբը հուշարձանը փոխանցեց պետությանը, բայց պարտադիր պայման դրեց չվերակառուցել կառույցը և ազատորեն թույլատրել այնտեղ այցելուներին: Բրիտանական թագը պարտքի տակ չմնաց և, ի երախտագիտություն նվերի, Չաբը ստացավ ասպետի կոչում:



Մթոունհենջի շինարարները որևէ գրառումներ չեն թողել, ուստի գիտնականները (և ոչ գիտնականները) երկար ժամանակ շահարկել են, թե ինչու է այն կառուցվել: 12-րդ դարի սկզբին, Ջեֆրի Մոնմութը, առաջին մարդկանցից մեկը, ով գրել է հնավայրի մասին, պնդում էր, որ այն կանգնեցվել է որպես հուշարձան հարյուրավոր բրիտանացիների համար, ովքեր սպանվել են սաքսոնների կողմից: Մեկ այլ տեսություն, որն առաջարկել է Ջոն Օբրին և 18-րդ դարի հնագետ Ուիլյամ Ստուքլին այն է, որ Մթոունհենջը կառուցվել է որպես դրուիդների տաճար:



Մեկ այլ տեսություն, որը ներկայացվել է 1960-ականներին, անդուն է, որ Սթոունհենջը եղել է աստղագիտական համակարգիչ, որն օգտագործվում էր խավարումները կանխատեսելու համար: Մինչդեռ կան մարդիկ, ովքեր հավատում են, որ Սթոունհենջը վայրեջքի վայր էր հնագույն տիեզերական այլմուտրակայինների համար, և Բրիտանական իշխանությունները հանրությունից հաղորդումներ են ստացել մոտակայքում սավառնող ՉԹՕ-ների մասին:



Դարվինը այնտեղ ուսումնասիրել է որդերը: 1877 թվականին բնագետ Չարլզ Դարվինը մեկնեց Սթոունհենջ՝ հետազոտություններ անցկացնելու համար, մի թեմա, որը վաղուց գրավել էր նրան՝ անձրևորդերը:



Իր այցելության ժամանակ Դարվինը եկավ այն եզրակացության, որ որդերի կենսագործունեության պատճառով էին քարերը ավելի խորն ընկել գետնի մեջ:

Այն մասին, որ Անգլիայի առաջին բնակիչները եղել են հայերը,
վկայում են բառեր, որոնք պահպանվել են երկու լեզուներում,
հատկապես Սյունիքի բարբառում

Դուռ - Door

Փունջ - Bunch

Ում - Whom

Ութ - Eight

Նավագնացություն - Navigation

Ով - Who

Բոթոլ, շիշ - Bottle

Կարպետ - Carpet

Բլղոլր - Bulgar

Ջեր - Hair

Էս - This

Լսել - Listen

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ
ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ



Ինչո՞ւ այցելել Բյուրականի աստղադիտարան

- աստղագիտությունն ամենագրավիչ գիտությունն է
- Հայաստանն աստղագիտական երկիր է: Միջազգային աստղագիտական կենտրոնի որոշմամբ՝ Հայաստանն ընտրվեց որպես տարածաշրջանում գլխավոր երկիր՝ լինելով զարգացման մակարդակով ամենաբարձրն ու ամենահամապատասխանը:
- այստեղ ապրել և աշխատել է հայ մեծ գիտնական Վիկտոր Համբարձումյանը
- այստեղ է գտնվում Հարավ-Արևմտյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային աստղագիտական կենտրոնը, որը համակարգում է աստղագիտության զարգացումը մեր հսկայական տարածաշրջանում
- որպեսզի տեսնել տարածաշրջանի խոշորագույն՝ 2.6մ աստղադիտակը
- հանդիպել պրոֆեսիոնալ աստղագետի,
- որովհետև Երկրի վրա միայն աստղադիտարանում քեզ կարող ես զգալ ինչպես Տիեզերքում
- Արարատին նայել Արագածի հարավային լանջից՝ ավելի զգալով նրա մեծությունը
- տեսնել հայ ճարտարապետության լավագույն կոթողներից մեկը՝ աստղադիտարանի ճարտարապետական համալիրը

Հայրենական մեծ պատերազմի օրերին, 1943 թ ստեղծվեց հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան: Նրա հիմնադիր անդամների կազմում էր երիտասարդ գիտնական Վիկտոր Համբարձումյանը, որն այդ ժամանակ ղեկավարում էր Լենինգրադի համալսարանի աստղադիտարանը: Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո նա ձեռնամուխ եղավ Հայաստանում աստղաֆիզիկական բնույթի ժամանակակից աստղադիտարան ստեղծելու գործին: Եվ ահա 1946 թ աշնանը Արագածի հարավային լանջին, Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի մոտ ծովի մակերևույթից շուրջ 1500 մ բարձրության վրա հիմնադրվեց Բյուրականի աստղադիտարանը:





Սկսվեց առաջին դիտաշտարակների շինարարությունը և համապատասխան մասնագետների ուսուցումը Երևանի համալսարանում:

Միաժամանակ բաց երկնքի տակ տեղակայված առաջին շատ համեստ աստղադիտակներով կատարվում էին անդրանիկ դիտումները: Հետզհետե ոտքի կանգնեց ու հզորացավ Բյուրականի աստղադիտարանը:



Շմիդտի աստղադիտակը

1956 թ արդեն, երբ շինարարության առաջին հերթի ավարտից հետո տեղի ունեցավ աստղադիտարանի պաշտոնական բացումը, ստացված կարևոր արդյունքների շնորհիվ նրա անունը հայտնի դարձավ գիտական աշխարհում: Ներկայումս աստղադիտարանի հիմնական գործիքներն են Եվրոպայում խոշորագույն հայելու 2,6 մ տրամագծով դասական համակարգի աստղադիտակը և ՍՍՀՄ-ում ամենամեծ լայնանկյուն, այսպես կոչված, Շմիդտի համակարգի մետրանոց աստղադիտակը (խոշորագույն 1մ տրամագծով պրիզմաներով), որոնցով դիտում են երկնային մարմինների սպեկտրները:



Տարբեր բնույթի աստղագիտական դիտումների համար օգտագործվում են նաև 53, 50 և 40 սմ տրամագծերով աստղադիտակներ: Դիտումների ժամանակ ստացված գիտական տվյալների մշակման համար կան չափիչ ու հաշվիչ ժամանակակից սարքեր:

Բյուրականի աստղադիտարանում կարևորագույն հետազոտություններ են կատարվել աստղերի ու գալակտիկաների առաջացման և զարգացման, ինչպես նաև՝ նյութի տիեզերական գոյածների ֆիզիկայի վերաբերյալ:



1947 թ օրինակ, հայտնագործվեցին աստղասփյուռները՝ երիտասարդ աստղերի այնպիսի խմբերը, որտեղ ձևավորվում են աստղերը: Այդ հայտնագործությամբ առաջին անգամ ապացուցվեց, որ մեր ժամանակներում ևս շարունակվում են աստղերի առաջացման երևույթները: Բյուրականում մշակվեցին և հիմնավորվեցին նաև գալակտիկաների կորիզների ակտիվության գաղափարները, որոնք հեղաշրջեցին մինչ այդ գիտության մեջ իշխող պատկերացումը: Բացահայտվեց, որ կորիզների ակտիվության շնորհիվ գալակտիկաներում անջատվում են էներգիայի ու նյութի վիթխարի քանակություններ և այդ հանգամանքը վճռական դեր է խաղում գալակտիկաների ձևավորման ու զարգացման մեջ:





Պարզվեց նաև, որ այդ ակտիվության հզոր դրսևորումները, ինչպես նաև՝ աստղասփյուռներում դիտվող որոշ երևույթներ պայմանավորված չեն բուն աստղերով կամ գազափոշային նյութով: Այդ կապակցությամբ Բյուրականում մշակվել է այն վարկածը, որ գալակտիկաներում, մասնավորապես, նրանց կորիզներում, գոյություն ունեն առայժմ անհայտ բնույթի խիտ գանգվածով մարմիններ (գերիսիտ նախաստղեր), որոնց նյութից ձևավորվում են աստղերն ու աստղային համակարգերը: Բյուրականի աստղադիտարանի հետազոտությունները զգալի ազդեցություն են թողել համաշխարհային աստղագիտության բնագավառում:


Բյուրականի աստղադիտարանի երիտասարդական դպրոցն աշխարհում լավագույններից է



2013 թ. ՀՀ կառավարության
կողմից Բյուրականի
աստղադիտարանին շնորհվել է ՀՀ
Ազգային արժեքի կարգավիճակ:



Այն Մատենադարանի և
Ցեղասպանության ինստիտուտի
հետ մեկտեղ ՀՀ 3 ազգային
արժեքներից մեկն է:



Վիկտոր Համբարձումյան

Վիկտոր Համբարձումյանը ծնվել է Թիֆլիսում, 1908 թվականի սեպտեմբերի 18-ին:

Հայրը՝ Համազասպ Համբարձումյանը եղել է իրավաբան, գրականագետ: Նկատելով երեք-չորս տարեկան որդու թվերի նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությունը, հայրն ավելի լրջորեն է զբաղվում օժտված զավակով՝ զարգացնելով բնատուր բնագիտական ձիրքը:



Դպրոցական տարիներին առավել ցայտուն են դրսևորվում մաթեմատիկայի և աստղագիտության նկատմամբ նրա հակումները: Այդ տարիներին արդեն հրապարակային դասախոսություններ է կարդում ֆիզիկայի և աստղագիտության խնդիրների վերաբերյալ:


1924 թվականի մարտին 15-ամյա Համբարձումյանը Երևանի պետական համալսարանում անվանի պրոֆեսորների, դասախոսների, ուսանողների և աշակերտների համար դասախոսություն է կարդում Ալբերտ Էյնշտեյնի հարաբերականության տեսության վերաբերյալ, որն ընդունվում է մեծ հետաքրքրությամբ: Մի քանի ամիս անց նույն դասախոսությունը կրկնում է Թիֆլիսում:

1924 թվականին Վիկտորն ընդունվում է Լենինգրադի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական բաժինը: Մեկ տարի անց տեղափոխվում է Լենինգրադի պետական համալսարան: 1926 թվականին, տակավին ուսանող, նա հրատարակում է իր առաջին գիտական հոդվածը նվիրված արեգակնային ջահերին:

Ուսանողական տարիներին տպագրում է ավելի քան 15 հոդված: Համալսարանն ավարտելուց հետո, 1928-31 թվականներին Վ.Համբարձումյանն ուսանել է Պուլկովոյի աստղադիտարանի ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Ա.Բելոպոլսկու ղեկավարությամբ: 1934 թվականին Լենինգրադի համալսարանում չորս տարի աշխատելուց հետո, Համբարձումյանը հիմնադրում է ԽՍՀՄ առաջին աստղաֆիզիկայի ամբիոնը:


















В.А.Амбарцумян



Վիկտոր Համբարձումյանի պատվիրանները

- Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերեն, անկախ նրանից ինչպիսի տոկոս է կազմում նրա մեջ հայկական արյունը:
- Չգնալ տրորված ճանապարհով, չհրապուրվել վաղանցիկ մոդայով: Մնայուն արժեքներով առաջնորդվելը մեր հետագա հաջողությունների գրավականն է:
- Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է զգա, որ նա պարտավոր է այս կամ այն ձևով հաշվետու լինել հասարակության առջև:

Վիկտոր Համբարձումյանի ԿՏԱԿԸ



«...Կտակում եմ.

Ինչ հաջորդող սերունդներին, ծոռներիս, և այլն, տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինել հայերեն, անկախ նրանից, ինչպիսի տոկոս է կազմում նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում:

Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ և այդ գաղափարների մեջ ինչ համար ամենաթանկը հայոց լեզուն է:

Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզուն:

Գիտցիր, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է և կմնա, քանի ապրում եմ հայոց լեզվին տիրապետելը:


Ցանկանում եմ երջանկություն բոլորիդ:


Դա նշանակում է, որ պետք է լավ տիրապետել հայոց լեզվին:

Վիկտոր Համբարձումյան

Մեր այցը Բյուրականի աստղադիտարան












Նախագծային աշխատանքը կատարել են՝

VII ե դասարան

*Բոյաջյան Արմեն
Հովհաննիսյան Հենրի
Ղազարյան Նարեկ
Ղազարյան Լիլի
Մարինգոլյան Նատալի
Սեդոյան Անի
Սուվարյան Էլինա*

VII ա դասարան

*Ասիրյան Ալինա
Ղազարյան Իռեն
Քոչարյան Մարիա
Օհանյան Էմիլի*



 movavi

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ